



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 մարտի 2021 թվականի N 261

ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՇ ԹԱՂԱՄԱՍԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑ 11/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՍԻ ՄԱՍՎԵԼ ՎՈԼՈՂՅԱՅԻ ԳԱԼՈՅԱՆԻ
ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի և հիմք ընդունելով Սամվել Վոլոդյայի Գալոյանի /ծնված՝ 1965 թվականի հոկտեմբերի 30-ին, Հայաստանի Հանրապետություն, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս տնակ 2բ տան /բնակչի լիազոր անձ՝ Հովակիմ Սամվելի Գալոյանի 2021 թվականի փետրվարի 19-ի դիմումը, Հրազդանի համայնքապետարանի <<Մարի>> համատիրության կառավարչի կողմից 2021 թվականի փետրվարի 15-ին տրված տեղեկանքը, համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից չափազրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Սամվել Վոլոդյայի Գալոյանին պատկանող Միկրոշրջան թաղամասի 2բ տնակի հասցեն փոփոխել Մուշ թաղամաս 3-րդ փողոց 11/1 հասցեով:
2. Վերականգնել Հրազդան քաղաքի Մուշ թաղամասի 3-րդ փողոց 11/1 հասցեում գտնվող Սամվել Վոլոդյայի Գալոյանին պատկանող 240.0քմ մակերեսով օրինական հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը:
3. Հողամասի սահմանները որոշվում են «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափազրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
4. Բնակելի տունը համապատասխանում է քաղաքաշինական նորմերին և փտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը:
5. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի միավորված մարզերի ստորաբաժանմանը՝ գրանցել

քաղաքացի Սամվել Վոլոդյայի Գալոյանի սեփականության իրավունքներն ամրագրված հողամասի, բնակելի տան նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

6. Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

02 մարտի 2021թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱԴԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 մարտի 2021թվականի N 262

**ԱՐԹՈՒՐ ՎԱԶԳԵՆԻ ՕԶԱՆՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ
ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԴԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 34-րդ հոդվածի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի բաժնից ստացված նյութերի հիման վրա: Ոստիկանության Հրազդանի բաժնի ՊՊԾ դասակի 2-րդ ջոկի ավագ ոստիկան, ոստիկանության ենթասպա Ս.Սամսոնյանի կողմից կատարած ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Կոտայքի մարզի մարզի Հրազդան համայնքի Միկրոշրջան թաղամասի 224-րդ շենքի 14-րդ բնակարանի բնակիչ Արթուր Վազգենի Օհանյանը Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի ««Լիդեր»» խանութի հարևանությամբ՝ առևտրի համար ոչ սահմանված վայրում, իրականացրել է բուսական ծագում ունեցող գյուղատնտեսական արտադրանքի՝ մասնավորապես բանջարեղենի և մրգի առևտուր, ինչն առաջացնում է վարչական պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի հատկանիշներով, այն է՝ բուսական ծագում ունեցող գյուղատնտեսական արտադրանքի ոչ սահմանված տեղերում առևտուր անելը, որն առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկից քսանապատիկի չափով: Հարուցված վարչական վարույթի վերաբերյալ ծանուցվել է Արթուր Օհանյանը, ապահովվել է վերջինիս արտահայտվելու և լսված լինելու իրավունքը:

Ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 32-րդ և 162-րդ հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասով, և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ղեկավարին կից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող հանձնաժողովի 2021 թվականի փետրվարի 26-ի ժամը 11:00-ի նիստի N 2-րդ արձանագրությունը:

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Արթուր Վազգենի Օհանյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակել տուգանք 15.000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ գումարի չափով:

2. Տուգանքի վճարումը կատարել սույն որոշման ստացման պահից 15-օրյա ժամկետում հետևյալ հաշվեհամարով՝ 900125001488:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արթուր Վազգենի Օհանյանին պատշաճ կարգով իրազեկելու հաջորդ օրը, և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ որոշման վերաբերյալ իրազեկվելու պահից երկամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

02 մարտի 2021թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 մարտի 2021թվականի N 263

**ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ
ՏՐԱՄԱԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 48¹-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ բաժնի 46.2-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի հոկտեմբերի 19-ի N 137 որոշման 1-ին կետը և մրցութային հանձնաժողովի 2021 թվականի փետրվարի 26-ի թիվ 2 արձանագրությունը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 16/1 հասցեում գտնվող 35.0քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 16 շենքի թիվ 37 բնակարանի բնակիչ Արտյոմ Լյովայի Պառավանին:

2. Կառուցապատման իրավունքով տրամադրված 35.0քմ մակերեսով հողամասի համար կնքել կառուցապատման իրավունքի պայմանագիր 15 000 (տասնհինգ հազար) դրամ տարեկան վարձավճարով, 99 (իննսունինը) տարի ժամկետով: Պայմանագրի կետերի կատարման հսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 մարտի 2021 թվականի N 264

**ԿԱՌՈՒՅԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 48¹-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ բաժնի 46.2-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 25-ի N 35 որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը և մրցութային հանձնաժողովի 2021 թվականի փետրվարի 26-ի թիվ 1 արձանագրությունը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 95/18 հասցեում գտնվող 32.2քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 95 շենքի թիվ 7 բնակարանի բնակիչ Շողեր Նիկոլայի Խալաթյանին:
2. Կառուցապատման իրավունքով տրամադրված 32.2քմ մակերեսով հողամասի համար կնքել կառուցապատման իրավունքի պայմանագիր՝ 20 000 (քսան հազար) դրամ տարեկան վարձավճարով, 99 (իննսունինը) տարի ժամկետով: Պայմանագրի կետերի կատարման հսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 մարտի 2021թվականի N 265

ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴՏԻ ԲԱԺԻ 2021-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ
ԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՎԱՎԵՐԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Ներքին աուդիտի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 80-րդ և 138-րդ կետերով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

- Վավերացնել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի 2021-2023 թվականների ռազմավարական և 2021 թվականի տարեկան ծրագրերը՝ համաձայն N 1, 2 հավելվածների:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

03 մարտի 2021թ.
ք.Հրազդան



Հաստատում եմ՝

Վավերացնում եմ՝

Հավելված 1
Հրազդան համայնքի ղեկավարի
2021 թվականի մարտի 3-ի
N 265 որոշման



ՆԱ խմբի ղեկավար
Մակիշ Խչեյան

25 դեկտեմբեր, 2020թ



Հրազդան համայնքի ղեկավար
Սևակ Միքայելյան

«03» « Դեկտեմբեր », 2021թ.

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ 2021-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դեկտեմբեր 2020թ.

Բովանդակություն

Ներածություն	3
Ներքին աուդիտի առաքելությունը և խնդիրները	4
Ռազմավարական ծրագրի կազմման հիմքերը.....	5
Հավելված 1. 2021-2023թթ. ռիսկերի վերլուծության նպատակով կիրառվող չափորոշիչներ.....	9
Հավելված 2. Ռիսկի առաջացման հավանականության և դրա ազդեցության վերջնական ցուցանիշներ.....	10
Հավելված 3. Աուդիտի ենթակա միավորներ 2021-2023թթ ընթացքում	12

Ներածություն

Ներքին աուդիտը անկախ, օբյեկտիվ հավաստիացման և խորհրդատվական գործառույթ է, որն ուղղված է Հրազդանի համայնքապետարանի (այսուհետ՝ Համայնքապետարան) գործունեության արդյունքի մեծացմանը և բարելավմանը: Այն աջակցում է Համայնքապետարանին հասնել իր նպատակներին՝ Համայնքապետարանի ռիսկերի կառավարման, հսկողության ու կառավարչական գործընթացների համակարգված և կանոնակարգված գնահատման ու բարելավման միջոցով:

Համայնքապետարանի ներքին աուդիտի գործառույթն իրականացնող կազմակերպությունը (այսուհետ՝ ՆԱ խումբ) ներքին աուդիտն իրականացնում է ներքին աուդիտի ստանդարտներին, վարքագծի կանոններին և ներքին աուդիտի սկզբունքներին համապատասխան: Ներքին աուդիտն աջակցում է Համայնքապետարանին իր նպատակների իրականացման գործում:

ՆԱ խումբն իր գործունեությունը իրականացնում է «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի, ներքին աուդիտի կանոնակարգի և իր լիազորությունների կատարման հետ կապված այլ իրավական ակտերի պահանջների համաձայն:

Ներքին աուդիտն իրականացվում է ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերի հիման վրա: Ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը հանդիսանում է աուդիտի երեք տարվա պլանավորման փաստաթուղթ: Սույն Ռազմավարական ծրագիրը սահմանում է 2021-2023թթ. ՆԱ խմբի կողմից իրականացվելիք աշխատանքների բնույթը, դրանց հիմնական նպատակները, աուդիտի ենթակա միավորների ընտրության հիմքերը: Ռազմավարական ծրագիրը կրում է ընդհանրական բնույթ և յուրաքանչյուր տարի համալրվում է ևս մեկ տարվա ծրագրով: ՆԱ խմբի կողմից յուրաքանչյուր տարի, ռազմավարական ծրագրի հիման վրա, կազմվում է ներքին աուդիտի տարեկան ծրագիր:

Ռազմավարական ծրագիրը բաղկացած է 4 բաժիններից՝ ներածություն, ներքին աուդիտի առաքելությունը և խնդիրները, ռազմավարական ծրագրի կազմման հիմքերը, աուդիտի ենթարկվող միավորների ցանկը, ինչպես նաև կից հավելվածներից:

Ներքին աուդիտի առաքելությունը և խնդիրները

«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՆԱ խումբն իրականացնում է երկու կարևորագույն գործառույթ՝ հավաստիացման և խորհրդատվության տրամադրում:

Հավաստիացման ծառայությունների համար նշանակված աուդիտորական առաջադրանքը համակարգային մոտեցմամբ իրականացվում է աուդիտի հետևյալ տեսակների միջոցով.

1) Համապատասխանության կամ իրավական աուդիտ, որը նախատեսված է օրենքներին, այլ իրավական ակտերին, ինչպես նաև Համայնքապետարանի գործունեությանն առնչվող այլ պայմաններին (պայմանագրերին, գերատեսչական նորմատիվ ակտերին և այլնին) համապատասխանությունն ուսումնասիրելու համար:

2) Կատարողականի աուդիտ, որը նախատեսված է գործընթացները գնահատել տնտեսելու, օգտավետության և արդյունավետության տեսանկյունից: Կատարողականի աուդիտն ուսումնասիրում է ծառայության մատուցումը այս երեք հատկանիշների տեսանկյունից:

3) Համապատասխանության և կատարողականի աուդիտի տեսակների համակցություն. որի տարատեսակներից են՝ համակարգի գնահատման, ֆինանսական, տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ աուդիտները:

Խորհրդատվական ծառայությունների համար նշանակված աուդիտորական առաջադրանքը բաղկացած է խորհրդատվության, կարծիքի ներկայացման, ուսուցման և այլ ծառայությունների մատուցումից, որոնք ուղղված են Համայնքապետարանի ռիսկերի կառավարման և հսկման գործընթացի բարելավմանը:

Ներքին աուդիտն իրականացվում է ներքին աուդիտի ստանդարտների համաձայն, այդ թվում՝ բավարար տեղեկությունների բացահայտման, վերլուծության, գնահատման և փաստաթղթային ամրագրման հիման վրա խնդիրների նկատմամբ կարծիքի ձևավորմամբ: Իրականացված յուրաքանչյուր ներքին աուդիտի համար պատրաստվում է հաշվետվություն, որը բաղկացած է համառոտ նկարագրից, խնդիրներից և շրջանակից, արդյունքներից, եզրահանգումներից,

առաջարկություններից և այլ մանրամասներից: Հաշվետվության նախագիծը տրամադրվում է ներքին աուդիտի ենթարկված միավորի ղեկավարին: Վերջինս նախագծի վերաբերյալ տալիս է գրավոր կարծիք, որը հաշվետվության անբաժան մասն է: Ընդ որում, եթե նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան, ապա նշված կարծիքը հանդիսանում է նախագծի վրա կատարված համապատասխան գրառումը և աուդիտի ենթարկված միավորի ղեկավարի ստորագրությամբ հաստատումը:

Աուդիտորական առաջադրանքի հաշվետվությունը հաստատում է ՆԱ խմբի ղեկավարը, և այն տրամադրում է աուդիտի ենթարկված միավորի ղեկավարին և Համայնքապետին ու ներքին աուդիտի կոմիտեին: Համայնքապետը քննարկում է ներքին աուդիտի հաշվետվությունը Կոմիտեի հետ և ընդունում որոշում:

Ներքին աուդիտի ենթակա միջավայրն ընդգրկում է աուդիտի բոլոր հնարավոր գործառույթները, առաջադրանքներն ու աուդիտի ենթակա գործընթացները: Ներքին աուդիտի ենթակա միջավայրը ներառում է Համայնքապետարանի ամբողջ համակարգը:

ՆԱ խմբի նպատակն է Համայնքապետին հավաստիացնել, որ ստորաբաժանումների, ինչպես նաև հաշվետու և ենթակա միավորների ղեկավարները և այլ պաշտոնատար, պատասխանատու անձինք պատշաճորեն կատարում են իրենց վրա դրված պարտականությունները (ներքին հսկողություն, ռիսկերի կառավարման և կառավարչական գործընթացների համակարգի ներդրում և պահպանում, ՀՀ իրավական ակտերով սահմանված իրավունքների և պարտականությունների կատարում):

Ռազմավարական ծրագրի կազմման հիմքերը

Ներքին աուդիտի 2021-2023 թվականների ռազմավարական ծրագրի մշակման և կազմման գործընթացն իրականացվել է հետևյալ հաջորդական փուլերի միջոցով.

- 1) Համայնքապետարանի ընդհանուր գործունեության ուսումնասիրում,
- 2) հիմնական ուսումնասիրման ենթակա միավորների նախանշում,
- 3) ռիսկերի գնահատում,

4) ընդհանուր ռեսուրսների հաշվարկում,

5) ռազմավարական ծրագրի կազմում:

1. Համայնքապետարանի ընդհանուր գործունեության ուսումնասիրման նպատակով վերլուծության են ենթարկվել արտաքին և ներքին միջավայրի վրա ազդող հիմնական գործոնները: Ներքին աուդիտորները օգտվել են կազմակերպության ռազմավարական ծրագրերից, կազմակերպության գործունեությունը կանոնակարգող օրենսդրությունից և կազմակերպության տարեկան և հեռանկարային բյուջեները կազմելու հիմք հանդիսացող հաշվարկներից: Այնուհետ նախանշվել են կազմակերպության հիմնական խնդիրները և նպատակները, կազմակերպության նպատակների իրագործման համար անհրաժեշտ աշխատանքների ու դրանց կատարման համար պատասխանատուների ցանկը՝ սահմանելով աուդիտի միջավայրը:

2. Ռիսկերի գնահատման նպատակով աուդիտի ենթակա միավորներից նախորդ տարի ստացված ռիսկերի գնահատման տեղեկագրերը վերանայվել են, գնահատվել է դրանցում կատարված հիմնական փոփոխությունների ծավալը:

Ռիսկերի գնահատման հաջորդ փուլում միավորների կողմից կազմված ռիսկերի գնահատման տեղեկագրերի միջին թվաքանական արժեքները ճշգրտվել/կշռվել են ՆԱ խմբի կողմից՝ օգտագործելով ռիսկերի վերլուծության համար կիրառվող չափորոշիչներ (տե՛ս Հավելված 1): Այս նպատակով չափորոշիչներից յուրաքանչյուրին տրվել է որոշակի ուղղիչ գործակից, որն արտահայտում է միավորի կողմից տրամադրված ռիսկի գնահատականների կշռման չափը: Ռիսկերի չափորոշիչներին տրվել են 0.5-ից 1.5 միջակայքում գտնվող թվերի մեծությամբ գործակիցներ: Չափորոշիչներից մեկը՝ «Նախորդ տարվա ընտրանքի արդյունքներ», օրենսդրությամբ սահմանված է որպես պարտադիր և դրա գնահատականների համար հիմք են հանդիսացել 2019 թվականներին իրականացված աուդիտորական առաջադրանքները: Մասնավորապես այն միավորները, որոնք աուդիտի են ենթարկվել 2019 թվականին, ստացել են 0.5 գնահատական, իսկ մնացած միավորներին տրվել է 1.5 գնահատական: Այն միավորները, որոնք ընդգրկված են եղել 2020 թվականի աուդիտորական առաջադրանքների ցանկում, սակայն ներկայումս դրանց անվանումները փոփոխվել են,

դրաց համար ևս «Նախորդ տարվա ընտրանքի արդյունքներ» չափորոշիչը 0.5 գնահատական է ստացել:

Որպես հաջորդ չափորոշիչ ընտրվել է Համայնքապետարանի ղեկավարության համար առաջնահերթության գնահատականը՝ «Ղեկավարության համար առաջնահերթություն»: Այս չափորոշիչի արժեքները որոշվել են Համայնքապետարանի համապատասխան ղեկավարների հետ քննարկումների արդյունքում:

Մյուս չափորոշիչն ըստ էության հանդիսանում է ՆԱ խմբի կողմից յուրաքանչյուր ստորաբաժանման ռիսկայնության գնահատականը, որը ձևավորվել է վերջինիս առնչվող հիմնական օրենսդրական դաշտի ուսումնասիրման և ստորաբաժանումների ղեկավարների կամ այլ պատասխանատուների հետ հանդիպումների արդյունքում: Նշված գնահատականների համար հիմք է հանդիսացել նաև 2020 թվականի ընթացքում իրականացված աուդիտորական առաջադրանքները, և դրանց իրականացման ընթացքում Համայնքապետարանի միավորների հետ ունեցած շփումները:

Հաջորդ՝ նշանակալիություն չափորոշիչի համար ՆԱ խումբը սահմանում է գործակից՝ ելնելով տվյալ միավորի աշխատանքների՝ Համայնքապետարանի ռազմավարական ծրագրով նախատեսված նշանակությունից (դերից):

Այնուհետև յուրաքանչյուր միավորի մասով հաշվարկվել են ռիսկի առաջացման հավանականության և դրա ազդեցության վերջնական ցուցանիշները (տե՛ս Հավելված 2): Հավելենք նաև, որ ռիսկի գնահատման վերջնական ցուցանիշների հաշվարկման համար կիրառվել է Excel-ի հիմքով ստեղծված հատուկ ծրագիր, որն ըստ էության հանդիսանում է ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ N 143-Ն հրամանի հավելվածի 95-117 կետերի պահանջների ավտոմատացումը:

Զգայուն ռիսկային խմբում գտնվող միավորների առնվազն 33%-ի, միջինի առնվազն 17%-ի և ցածրի առնվազն 5%-ի միջև ընտրություն կատարելու նպատակով կիրառվել է կամայական ընտրանքի մեթոդը:

3. Ներքին աուդիտի ղեկավարը սահմանում է այն աշխատանքային օրերի քանակը, որն անհրաժեշտ է հաջորդ երեք տարիների ընթացքում՝ տարեկան կտրվածքով, արդեն ընտրված միավորներն աուդիտի ենթարկելու համար: Աուդիտի գործունեության համար ակնկալվող ստանդարտ ժամանակահատվածը որոշելու համար հաշվի է առնվել

յուրաքանչյուր միավորի ռիսկայնության մակարդակը: Բացի ռիսկայնության գործոնից հաշվի է առնվել նաև միավորի բարդությունը: Պարզ միավորներն ավելի քիչ ժամանակ են պահանջում քան բարդ միավորները: Ներքին աուդիտի խմբի ռեսուրսները հաշվարկվում են յուրաքանչյուր տարի՝ հաշվի առնելով վերապատրաստումների ժամանակահատվածը, աշխատակիցների ամենամյա արձակուրդները, հիվանդության պատճառով բացակայությունները և այլն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներքին աուդիտի ծառայությունը նախատեսվում է ձեռք բերել գնումների մասին ՀՀ օրենսդրության շրջանակներում կազմակերպված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպությունից, 2021 թ. ներքին աուդիտի աշխատանքները իրականացվելու են տվյալ կազմակերպության հանրային հատվածի ներքին աուդիտի որակավորում ունեցող ներքին աուդիտորների կողմից:

Ռազմավարական ծրագրի կազմման վերջնական փուլում, հաշվի առնելով միավորների ռիսկային խմբերը, ինչպես նաև Համայնքապետարանի գերակայությունները, որոշվել են 2021-2023 թվականների աուդիտի ենթակա միավորները, յուրաքանչյուր միավորում աուդիտի անցկացման ժամանակահատվածը (տե՛ս Հավելված 3):

ՆԱ խմբի ղեկավար՝
2021թ. դեկտեմբերի 25



Մակիչ Խչեյան

Հավելված 1. 2021-2023թթ. ռիսկերի վերլուծության նպատակով կիրառվող ջափորոշիչներ

N	Ջափորոշիչի տեսակը	Ջափորոշիչի նկարագիրը
1.	Ղեկավարության համար առաջնահերթություն	Գործակից սահմանվում է ելնելով տվյալ միավորի համար Համայնքապետարանի ղեկավարության տրամադրած գնահատականներից:
2.	ՆԱ խմբի նախնական գնահատականը	Գործակիցը սահմանվում է յուրաքանչյուր ստորաբաժանմանը առնչվող հիմնական օրենսդրական դաշտի ուսումնասիրման և ստորաբաժանումների ղեկավարների կամ այլ պատասխանատուների հետ ՆԱ խմբի հանդիպումների արդյունքում:
3.	Նախորդ տարվա ընտրանքի արդյունքներ	1) Գործակիցը սահմանվում է՝ ա. 0.5- եթե միավորը նախորդ տարում ընդգրկվել է աուդիտի ընտրանքում. բ. 1- եթե միավորը նախորդ առաջին տարում ընդգրկվել է աուդիտի ընտրանքում. գ. 1.5-եթե միավորը չի ընդգրկվել նախորդ ռազմավարական ծրագրերում:
4.	Նշանակալիություն	Գործակիցը սահմանվում է՝ ելնելով տվյալ միավորի աշխատանքների՝ կազմակերպության ռազմավարական ծրագրով նախատեսված նշանակալիությունից (դերից):

Հավելված 2. Ռիսկի առաջացման հավանականության և դրա ազդեցության վերջնական ցուցանիշներ

Հ/Հ	Միավորի անվանումը	Ռիսկի հավանականության ընդհանուր գնահատականը	Ռիսկի ազդեցության ընդհանուր գնահատականը	Ռիսկի խումբը
1	Համայնքապետարանի աշխատակազմ	2	2	Միջին
2	Ֆինանսական բաժին	4	4	Բարձր
3	Հարկային բաժին	2	2	Միջին
4	Տրանսպորտի, առևտրի և սպասարկումների կանոնակարգման բաժին	1	1	Ցածր
5	Բնակֆոնդի շահագործման և կոմունալ տնտեսության բաժին	1	1	Ցածր
6	Կրթության, մշակույթի և սպորտի բաժին	1	1	Ցածր
7	Տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժին	3	3	Բարձր
8	Քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժին	1	3	Միջին
9	Համայնքապետարանի վարչական շենքի պահպանման և սպասարկման հիմնարկ	2	2	Միջին
10	«Աղբահանություն և սանմաքրում» բյուջետային հիմնարկ	1	1	Ցածր
11	«Մաքուր Հրազդան» ՀՈԱԿ	1	1	Ցածր
12	«Հուլարկավորությունների կազմակերպման, գերեզմանատների, հուշարձանների պահպանման և շահագործման» ՀՈԱԿ	1	1	Ցածր
13	«Հրազդանքաղույս» ՀՈԱԿ	1	1	Ցածր
14	«Մշակույթի կենտրոն» բյուջետային հիմնարկ	2	2	Միջին
15	«Հրազդանի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ	2	2	Միջին
16	«Հրազդանի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ	2	1	Ցածր
17	«Հրազդանի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ	2	2	Միջին

18	«Հրազդանի թիվ 6 մանկապարտեզ» ՀՈԱԿ	2	2	Միջին
19	«Հրազդանի թիվ 7 մանկապարտեզ» ՀՈԱԿ	1	2	Ցածր
20	«Հրազդանի թիվ 8 մանկապարտեզ» ՀՈԱԿ	2	2	Միջին
21	«Հրազդանի թիվ 9 մանկապարտեզ» ՀՈԱԿ	1	2	Ցածր
22	«Հրազդանի թիվ 11 մանկապարտեզ» ՀՈԱԿ	1	1	Ցածր
23	«Հրազդանի թիվ 12 մանկապարտեզ» ՀՈԱԿ	1	1	Ցածր
24	«Հրազդանի թիվ 13 մանկապարտեզ» ՀՈԱԿ	1	2	Ցածր
25	«Հրազդանի թիվ 15 մանկապարտեզ» ՀՈԱԿ	1	1	Ցածր
26	«Հրազդանի թիվ 16 մանկապարտեզ» ՀՈԱԿ	1	2	Ցածր
27	«Հրազդանի քաղաքային դրամատիկական թատրոն» ՀՈԱԿ	1	1	Ցածր
28	Հրազդանի Վ. Զաքարյանի անվան երիտասարդական մարզամշակութային ուսումնասկան կենտրոն	2	3	Զգայուն
29	«Հրազդանի Արամ Խաչատրյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	1	2	Ցածր
30	«Հրազդանի Առնո Բաբաջանյանի անվան թիվ 2 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	4	4	Բարձր
31	«Հրազդանի Կ. Զաքարյանի անվան մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ	1	2	Ցածր
32	«Երվանդ Քոչարի անվան մանկական արվեստի դպրոց» կմ ՀՈԱԿ	1	2	Ցածր
33	Հրազդանի Մանկական ստեղծագործական Կենտրոն	1	1	Ցածր
34	Հրազդանի համայնքապետարանի Մանկապատանեկան մարզադպրոց	2	2	Միջին

Հավելված 3. Աուդիտի ենթակա միավորներ 2021-2023թթ ընթացքում

2021 թվական		
Հ/Հ	Միավորի անվանումը	Ռիսկի խումբ
1	Համայնքապետարանի աշխատակազմ	Միջին
2	Ֆինանսական բաժին	Բարձր
3	Քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժին	Միջին
4	Հարկային բաժին	Միջին
5	Տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժին	Բարձր
6	Հրազդանի Վ. Ջաքարյանի անվան երիտասարդական մարզամշակույթային ուսումնասական կենտրոն	Զգայուն
7	«Հրազդանի Առնո Բաբաջանյանի անվան թիվ 2 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	Բարձր
8	«Հրազդանի թիվ 9 մանկապարտեզ» ՀՈԱԿ	Ցածր
9	Համայնքապետարանի գնումների գործընթաց ¹	
2022 թվական		
1	Հրազդանի համայնքապետարանի Մանկապատանեկան մարզադպրոց	Միջին
2	«Հրազդանի թիվ 11 մանկապարտեզ» ՀՈԱԿ	Ցածր
3	Համայնքապետարանի վարչական շենքի պահպանման և սպասարկման հիմնարկ	Բարձր
4	«Երվանդ Քոչարի անվան մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ	Ցածր
5	«Հրազդանի թիվ 12 մանկապարտեզ» ՀՈԱԿ	Ցածր
6	«Հրազդանի թիվ 8 մանկապարտեզ» ՀՈԱԿ	Միջին
7	Կրթության, մշակույթի և սպորտի բաժին	Ցածր
8	«Հուլարկավորությունների կազմակերպման, գերեզմանատների, հուշարձանների պահպանման և շահագործման» ՀՈԱԿ	Ցածր
9	«Մշակույթի կենտրոն» բյուջետային հիմնարկ	Միջին
10	«Հրազդանի թիվ 16 մանկապարտեզ» ՀՈԱԿ	Ցածր
11	«Հրազդանի Կ. Ջաքարյանի անվան մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ	Ցածր
12	«Հրազդանի Արամ Խաչատրյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	Ցածր
13	Համայնքապետարանի գնումների գործընթաց	

¹ Համայնքապետարանի գնումների գործընթացը ենթակա է պարտադիր աուդիտի յուրաքանչյուր տարի: Ենթակա հիմնարկների գնումների գործընթացները աուդիտի կենթարկվեն ընտրանքում ներառված լինելու դեպքում

2023 թվական		
1	Տրանսպորտի, առևտրի և սպասարկումների կանոնակարգման բաժին	Ցածր
2	Բնակֆոնդի շահագործման և կոմունալ տնտեսության բաժին	Ցածր
3	«Աղբահանություն և սանմաքրում» բյուջետային հիմնարկ	Ցածր
4	«Մաքուր Հրազդան» ՀՈԱԿ	Ցածր
5	«Հրազդանքաղույս» ՀՈԱԿ	Ցածր
6	«Հրազդանի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ	միջին
7	«Հրազդանի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ	միջին
8	«Հրազդանի թիվ 6 մանկապարտեզ» ՀՈԱԿ	միջին
9	«Հրազդանի թիվ 7 մանկապարտեզ» ՀՈԱԿ	ցածր
10	«Հրազդանի թիվ 15 մանկապարտեզ» ՀՈԱԿ	ցածր
11	«Հրազդանի թիվ 16 մանկապարտեզ» ՀՈԱԿ	ցածր
12	«Հրազդանի քաղաքային դրամատիկական թատրոն» ՀՈԱԿ	ցածր
13	Հրազդանի Մանկական ստեղծագործական Կենտրոն	ցածր
14	Համայնքապետարանի գնումների գործընթաց	

Հաստատում եմ՝

Վավերացնում եմ՝

Հավելված 2
Հրազդան համայնքի ղեկավարի
2021 թվականի մարտի 3-ի
N 265 որոշման



ՆԱ խմբի ղեկավար
Մակիչ Իսչեյան

25 դեկտեմբեր, 2020թ




Հրազդան համայնքի ղեկավար
Սևակ Միքայելյան
«03» «*Տարի*» 2021թ.

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԴԵԿՏԵՄԲԵՐ 2020թ.

Բովանդակություն

Ներածություն.....	3
Ներքին աուդիտի դերն ու նշանակությունը	4
Տարեկան ծրագրի պլանավորումը և հաստատումը.....	5
ՆԱ խմբի աշխատանքային ռեսուրսների հաշվարկը.....	6
ՆԱ խմբի աշխատանքների կազմակերպումը	7
Հաշվետվություններ	7
Հավելված 1. 2021թ. ներքին աուդիտի տարեկան ծրագիր.....	9

Ներածություն

Ներքին աուդիտի 2021 թվականի տարեկան ծրագրի մշակման համար հիմք է հանդիսացել 2021-2023 թվականների ռազմավարական ծրագիրը:

Տարեկան ծրագիրը տրամադրում է տեղեկատվություն ներքին աուդիտի ծառայություն մատուցող կազմակերպության (այսուհետ՝ ՆԱ խումբ) կողմից իրականացվող աուդիտորական առաջադրանքների բնույթի վերաբերյալ, որոնք ակնկալվում են իրականացվել 2021 թվականի ընթացքում: Տարեկան ծրագիրը սահմանում է տվյալ տարվա ընթացքում իրականացվող աուդիտորական առաջադրանքների անցկացման նպատակները, աշխատանքի շրջանակները, առաջադրանքների համար անհրաժեշտ ռեսուրսների քանակը և այլն:

ՆԱ խումբը իր գործառույթներն իրականացնելիս առաջնորդվում է հանրային հատվածի ներքին աուդիտի ոլորտը կարգավորող նորմատիվ և ենթաօրենսդրական իրավական ակտերով:

Տարեկան ծրագիրը բաղկացած է հետևյալ բաժիններից՝ ներածություն, տարեկան ծրագրի պլանավորումը և հաստատումը, ՆԱ խմբի աշխատանքային ռեսուրսների հաշվարկը, ՆԱ խմբի աշխատանքների կազմակերպումը, հաշվետվությունները և հավելվածները:

Ներքին աուդիտի դերն ու նշանակությունը

ՆԱ խումբն իրականացնում է երկու կարևորագույն գործառույթ՝ հավաստիացման և խորհրդատվության տրամադրում, որոնք ուղղված են Հրազդանի համայնքապետարանի (այսուհետ՝ Համայնքապետարան) գործունեության արդյունքների մեծացմանը և բարելավմանը: Հավաստիացում տրամադրելու նպատակով ՆԱ խմբի կողմից իրականացվում է ապացույցների օբյեկտիվ գնահատում՝ գործընթացի, համակարգի կամ աուդիտի ենթարկված այլ բաղադրիչի վերաբերյալ անկախ դիրքորոշում կամ եզրակացություն ներկայացնելու միջոցով:

Ներքին աուդիտի գործունեությունն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով ՆԱ խումբն իրականացնում է Համայնքապետարանի գործունեության մոնիթորինգ և վերլուծություն, ներկայացնում է առաջարկություններ՝ հետևելով ներքին աուդիտի ստանդարտներին, ներքին աուդիտորների վարքագծի կանոններին, ներքին աուդիտի կանոնակարգին և ներքին աուդիտի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերին:

ՆԱ խումբն աջակցում է Համայնքապետարանին իր նպատակների արդյունավետ իրականացման գործում՝ կառավարչական գործընթացների, ներքին հսկողության համակարգի, ռիսկերի կառավարման գործընթացների համակարգված և կարգավորված գնահատման ու դրանց բարելավման միջոցով:

ՆԱ խմբի նպատակն է Համայնքապետին հավաստիացնել, որ Համայնքապետարանի պաշտոնատար, պատասխանատու անձինք պատշաճորեն կատարում են իրենց վրա դրված պարտականությունները (ներքին հսկողություն, ռիսկերի կառավարման և կառավարչական գործընթացների համակարգի ներդնում և պահպանում, ՀՀ իրավական ակտերով սահմանված իրավունքների և պարտականությունների կատարում):

Տարեկան ծրագրի պլանավորումը և հաստատումը

Ներքին աուդիտի 2021 թվականի տարեկան ծրագիրը կազմվել է 2021-2023թթ. ռազմավարական ծրագրի հիման վրա՝ հաշվի առնելով աուդիտի ենթակա միավորների կողմից իրականացվող գործառույթների ռիսկայնության մակարդակը, ՆԱ խմբում առկա ընդհանուր ռեսուրսները, ինչպես նաև Համայնքապետարանի գերակայությունները: Արդյունքում, 2021 թվականի ընթացքում նախատեսվել է աուդիտի իրականացում 9 միավորներում (տե՛ս Հավելված 1):

Նշված աուդիտի ենթակա միավորներում նախատեսվում է հիմնականում իրականացնել համակարգի գնահատման աուդիտ, որն ընդգրկում է ֆինանսական կառավարման համակարգերի և ղեկավարության կողմից ներդրված ներքին հսկողության համակարգերի մանրակրկիտ գնահատում՝ դրանց արդյունավետությունը և օգտավետությունը ուսումնասիրելու և դիտարկելու նպատակով: Համակարգի գնահատման աուդիտը հանդիսանում է ներքին աուդիտի տեսակներից ամենաարդյունավետը, քանի որ, եթե հսկողության գործընթացները գործում են այնպես, ինչպես նախատեսված է, ապա և՛ ներքին աուդիտորները, և՛ Համայնքապետը կարող են հավաստիացած լինել հսկողության համակարգի պատշաճության մեջ:

Համակարգի գնահատման աուդիտով իրականացվելու է կառավարչական գործընթացների գնահատում և բարելավում՝ գնահատելով գործընթացների նախագիծը և գործունեության արդյունավետությունը:

ՆԱ խմբի կողմից իրականացվելու է Համայնքապետարանում ներդրված հսկողական գործընթացների նախագծի, ներդրման և գործընթացների գործունեության արդյունավետության գնահատում: Ներքին հսկողության համակարգի գործընթացները գնահատելիս թերացումների և բացթողումների հայտնաբերման դեպքում ՆԱ խումբը կարող է առաջարկություններ ներկայացնել այդ թերացումների և բացթողումների վերացման նպատակով՝ ստեղծելով հավելյալ արժեք Համայնքապետարանի համար:

ՆԱ խմբի աշխատանքային ռեսուրսների հաշվարկը

Աուդիտի գործունեության համար ակնկալվող ժամանակահատվածը որոշելու համար հաշվի է առնվել յուրաքանչյուր միավորի ռիսկայնության մակարդակը և միավորի բարդությունը, աուդիտորական առաջադրանքի նպատակները և ՆԱ խմբի աշխատանքային ռեսուրսները:

ՆԱ խմբի աշխատանքային ռեսուրսները պլանավորելիս հաշվի են առնվել տարվա մեջ յուրաքանչյուր աշխատակցի համար հասանելի աշխատանքային օրերը, նախատեսված վերապատրաստումների ժամանակահատվածը, ամենամյա արձակուրդները և այլ բացակայությունները (տե՛ս Աղյուսակ 1): Այնուհետև հաշվարկվել են ներքին աուդիտի աշխատանքների համար անհրաժեշտ օրերի ընդհանուր թիվը (տե՛ս Հավելված 1)՝ հաշվի առնելով աուդիտորական առաջադրանքի պլանավորման, ընթացակարգերի իրականացման, հաշվետվությունների կազմման և ներկայացման, վերստուգման աշխատանքների իրականացման և այլ գործողությունների համար անհրաժեշտ օրերի ընդհանուր թիվը:

Արդյունքում, 2021 թվականի ընթացքում ՆԱ խմբի աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ կլինի առնվազն 2 աշխատակից, որը ստացվում է պլանավորված ընդհանուր օրերի թիվը բաժանելով ներքին աուդիտորի միջին հասանելի օրերի թվի վրա ($370/152 \approx 2$)՝ համաձայն Հավելված 1-ի և Աղյուսակ 1-ի:

Աղյուսակ 1

Հ/Հ	Նկարագրություն	Մարդ/Օրերի քանակ	Հաշվարկ
1	Հասանելի առավելագույն ժամանակահատված	916	229օր * 3 մարդ
2	Տարեկան արձակուրդ	(96)	24օր * 3 մարդ
3	Վերապատրաստումներ	(32)	8օր * 3 մարդ
4	Չնախատեսված դեպքեր	(40)	187օր մեկ անձի կտրվածքով
5	Տարեկան հասանելի ռեսուրս	748	

Չնայած վերոնշյալ հաշվարկին՝ ՆԱ խումբը պլանավորում է աուդիտորական աշխատանքների իրականացման ժամանակ ներգրավել առնվազն 3 աուդիտոր:

ՆԱ խմբի աշխատանքների կազմակերպումը

ՆԱ խմբի աշխատանքները կազմակերպվում և իրականացվում են Համայնքապետարանի ներքին աուդիտի կանոնակարգի պահանջներին համապատասխան:

ՆԱ խումբը անընդհատ չի զբաղեցնելու աուդիտի ենթակա միավորի աշխատակիցներին և չի խոչընդոտելու վերջիններիս աշխատանքների բնականոն իրականացումը:

ՆԱ խումբի անդամները պարբերաբար մասնակցում են վերապատրաստման տարբեր դասընթացների՝ ինչպես ՀՀ ֆինանսների նախարարության, այնպես էլ այլ մասնագիտական կառույցների կողմից կազմակերպված: ՆԱ խմբի գործունեության արդյունավետության և աուդիտորների մասնագիտական կարողունակության բարձրացման նպատակով ՆԱ խմբի յուրաքանչյուր աշխատակցի համար 2021 թվականին ևս նախատեսված է առնվազն 30 ժամ (5 օր) վերապատրաստում:

Հաշվետվություններ

ՆԱ խումբը յուրաքանչյուր աուդիտորական առաջադրանքի համար կազմում է հաշվետվություն, որը կարող է լինել միջանկյալ, նախնական և վերջնական: Խումբը մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը Համայնքապետին, Կոմիտեին և լիազոր մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացնում իր գործունեության հետ կապված տարեկան հաշվետվությունը:

Միջանկյալ հաշվետվություններ. աուդիտի իրականացման ընթացքում հրատապ խնդիրներ առաջանալու դեպքում և դրանց բարձր ռիսկայնությամբ պայմանավորված պատրաստվում է միջանկյալ հաշվետվություն՝ առաջացած խնդիրները Համայնքապետին և Կոմիտեին ներկայացնելու համար:

Նախնական հաշվետվություններ. աուդիտորական առաջադրանքների ամփոփումից հետո պատրաստվում է արդյունքների մասին նախնական հաշվետվություն: Նախնական հաշվետվությունը տրվում է աուդիտի ենթարկվող միավորին՝ դիտարկումներին արձագանքելու նպատակով:

Նախնական հաշվետվության կազմման համար հիմք են հանդիսանում վերջնական հանդիպման ընթացքում իրականացված քննարկումների արդյունքները: Նախնական հաշվետվության վերաբերյալ աուդիտի ենթարկվող միավորը 5 աշխատանքային օրվա ընթացքում պետք է ներկայացնի իր դիրքորոշումը, դիտողությունները և առաջարկությունները:

Վերջնական հաշվետվություններ. Անհրաժեշտ քննարկումներից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում պատրաստվում և Համայնքապետին, Կոմիտեին ու աուդիտի ենթարկված միավորի ղեկավարին է ներկայացվում կատարված աուդիտորական առաջադրանքի վերջնական հաշվետվությունը:

Գործունեության տարեկան հաշվետվություն. ՆԱ խումբը մինչև 2022թ. մարտի 1-ը Համայնքապետին, Կոմիտեին պետք է ներկայացնի տարեկան հաշվետվություն, որը ամփոփում է 2021 թվականի ընթացքում կատարած ՆԱ խմբի գործունեությունը և հնարավորություն է ընձեռում կատարել համեմատություն ՆԱ խմբի կատարողականի և տարեկան ծրագրի միջև՝ բացահայտելով ի հայտ եկած շեղումները և դրանց պատճառները:

2020թ. դեկտեմբերի 25

ՆԱ խմբի ղեկավար

Մակիչ Խչեյան



Հավելված 1. 2021թ. ներքին աուդիտի տարեկան ծրագիր

Հ/Հ	Միավորի անվանումը	Ռիսկի խումբ	Աուդիտի տեսակ	Աուդիտի նպատակը	Աուդիտի ժամանակահատված	Առաջարկանքի համար անհրաժեշտ օրերի քանակ
1	Համայնքապետարանի աշխատակազմ	Միջին	Համապատասխանության աուդիտ	Համայնքի ղեկավարի, ավագանու և Համայնքապետարանի աշխատակազմի ղեկավարի որոշումների ուսումնասիրություն: Ներքին հսկողական համակարգերի առկայության և դրանց արդյունավետության գնահատում	Համապատասխան պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո մինչև 10/12/2021	40
2	Ֆինանսական բաժին	Բարձր	Համապատասխանության աուդիտ	Բաժնի լիազորությունների շրջանակում կայացված որոշումների իրավաչափության գնահատում: Ներքին հսկողական համակարգերի առկայության և դրանց արդյունավետության գնահատում	Համապատասխան պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո մինչև 10/12/2021	40

3	Քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժին	Զգայուն	Համապատասխանության աուդիտ	Ներքին հսկողական համակարգերի առկայության և դրանց արդյունավետության գնահատում	Համապատասխան պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո մինչև 10/12/2021	40
4	Հարկային բաժին	Միջին	Համապատասխանության աուդիտ	Ներքին հսկողական համակարգերի առկայության և դրանց արդյունավետության գնահատում	Համապատասխան պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո մինչև 10/12/2021	40
5	Տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժին	Բարձր	Համապատասխանության աուդիտ	Ներքին հսկողական համակարգերի առկայության և դրանց արդյունավետության գնահատում	Համապատասխան պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո մինչև 10/12/2021	40
6	Հրազդանի Վ. Զաքարյանի անվան երիտասարդական մարզամշակութային ուսումնասկան կենտրոն	Զգայուն	Համակարգի գնահատման աուդիտ	Ներքին հսկողական համակարգերի առկայության և դրանց արդյունավետության գնահատում	Համապատասխան պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո մինչև 10/12/2021	30
7	«Հրազդանի Առնո Բաբաջանյանի անվան թիվ 2 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	Բարձր	Համակարգի գնահատման աուդիտ	Ներքին հսկողական համակարգերի առկայության և դրանց արդյունավետության գնահատում	Համապատասխան պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո մինչև 10/12/2021	30
8	«Հրազդանի թիվ 9 մանկապարտեզ» ՀՈԱԿ	Ցածր	Համակարգի գնահատման աուդիտ	Ներքին հսկողական համակարգերի առկայության և դրանց արդյունավետության գնահատում	Համապատասխան պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո մինչև 10/12/2021	30

9	Համայնքապետարանի գնումների գործընթաց		Համապատաս խանության առկիտ	Գնումների գործընթացում առկա ենքին հսկողությունների արդյունավետության գնահատում	Համապատասխան պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո մինչև 10/12/2021	40
---	---	--	---------------------------------	---	--	----



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 մարտի 2021 թվականի N 266

**ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՊԱՐՄՊԻ, ԴՐԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով, Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ մասով հաստատված կարգերի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափազորված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի 2021 թվականի փետրվարի 26-ի թիվ 4 մասնագիտական եզրակացությունը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հրազդան համայնքին պատկանող Միկրոշրջան թաղամասում գտնվող 0517-0024 ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, Զորավար Անդրանիկի պողոտա 70/3:
2. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի թիվ 369 տան բնակիչ Շողիկ Ալեքսանյանի կողմից ինքնակամ կառուցած Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս, Զորավար Անդրանիկի պողոտա 70/3 հասցեում գտնվող 30.35քմ ընդհանուր մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը և 30.35քմ մակերեսով հասարակական նշանակության պարիսպը ճանաչել օրինական և գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:
3. Հրազդան համայնքին պատկանող Միկրոշրջան թաղամաս, Զորավար Անդրանիկի պողոտա 70/3 հասցեում գտնվող 30.35քմ ընդհանուր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողերից փոփոխել հասարակական կառուցապատման:
4. Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի

համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և
գյուղատնտեսության բաժնին:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

03 մարտի 2021թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 մարտի 2021 թվականի N 267

**ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅԱԾ ԱՌԵՎՏՐԻ, ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՇԵՆՔԻ, ԴՐԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով, Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ մասով հաստատված կարգերի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափազրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի 2021 թվականի փետրվարի 26-ի թիվ 5 մասնագիտական եզրակացությունը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Հրազդան համայնքին պատկանող Միկրոշրջան թաղամասում գտնվող 0517-0024 ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, Զորավար Անդրանիկի պողոտա 70/4:
2. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի թիվ 369 տան բնակիչ Շողիկ Ալեքսանյանի կողմից ինքնակամ կառուցած Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս, Զորավար Անդրանիկի պողոտա 70/4 հասցեում գտնվող 280.0քմ ընդհանուր մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը և 144.39քմ արտաքին մակերեսով հասարակական նշանակության առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքը ճանաչել օրինական և գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:

3. Հրազդան համայնքին պատկանող Միկրոշրջան թաղամաս, Զորավար Անդրանիկի պողոտա 70/4 հասցեում գտնվող 280.0քմ ընդհանուր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողերից փոփոխել հասարակական կառուցապատման:

4. Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

03 մարտի 2021թ.
Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 մարտի 2021 թվականի N 268

**ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ
ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով դիմումատուի հայտը և Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի N 147-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Անհատ ձեռնարկատեր Անիկ Խաչատրյանին տալ ոգելից խմիչքների վաճառքի թույլտվություն մինչև 2021 թվականի մարտի 31-ը՝ առաջին եռամսյակի համար:
2. Անհատ ձեռնարկատեր Անիկ Խաչատրյանին տալ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) վաճառքի թույլտվություն մինչև 2021 թվականի մարտի 31-ը՝ առաջին եռամսյակի համար /զրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան 78/2, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, շենք 78, 1-ին հարկ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն, մինչև 26 քառակուսի մետր մակերես/:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

03 մարտի 2021 թ.
ք. Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 մարտի 2021թվականի N 269

**ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 14-րդ կետի, հիմք ընդունելով դիմումատուի հայտը և Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի N147-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

- 2) 252.000 (երկու հարյուր հիսուն երկու հազար) դրամ արժողությամբ 20 հատ աղբաման,
- 3) 32.000 (երեսուն երկու հազար) դրամ արժողությամբ 4 հատ աղբարկղ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

05 մարտի 2021թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Մահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մարտի 2021 թվականի N 301

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ՀՐԱԶԴԱՆՔԱՂԼՈՒՅՍ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2021 թվականի փետրվարի 25-ի N 22 որոշումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հրազդանի համայնքապետարանի «Հրազդանքաղլույս» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օտարել Հրազդանի համայնքապետարանի սեփականություն հանդիսացող հետևյալ գույքը.

- 1) 507.500 (հինգ հարյուր յոթ հազար հինգ հարյուր) դրամ արժողությամբ 25 հատ էլեկտրական հենասյուն (100մմ),
- 2) 2500 (երկու հազար հինգ հարյուր) դրամ արժողությամբ 50 հատ ֆարֆուրե մեկուսիչ,
- 3) 19.987.500 (տասնինը միլիոն ինը հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր) դրամ արժողությամբ 246 հատ հենասյուններով լուսավորության ցանց:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

05 մարտի 2021թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մարտի 2021 թվականի N 302

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՈՒՅՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2021 թվականի փետրվարի 25-ի N 23 որոշումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

- Հրազդանի համայնքապետարանի սեփականություն հանդիսացող 80 հատ «մարմնամարզական պատ» գույքը անհատույց օտարել սույն որոշման հավելվածով ներկայացված համայնքային ենթակայության կազմակերպություններին:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

05 մարտի 2021 թ.
ք. Հրազդան





ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿ

Հ/հ	Հաստատության անվանումը	Գույքի անվանումը	Քանակը
1.	<<ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի թիվ 2 մանկապարտեզ>> ՀՈԱԿ	<<Մարմնամարզական պատ>>	1 հատ
2.	<<ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի թիվ 4 մանկապարտեզ>> ՀՈԱԿ	<<Մարմնամարզական պատ>>	5 հատ
3.	<<ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի թիվ 5 մանկապարտեզ>> ՀՈԱԿ	<<Մարմնամարզական պատ>>	4 հատ
4.	<<ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի թիվ 6 մանկապարտեզ>> ՀՈԱԿ	<<Մարմնամարզական պատ>>	5 հատ
5.	<<ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի թիվ 7 մանկապարտեզ>> ՀՈԱԿ	<<Մարմնամարզական պատ>>	4 հատ
6.	<<ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի թիվ 8 մանկապարտեզ>> ՀՈԱԿ	<<Մարմնամարզական պատ>>	6 հատ
7.	<<ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի թիվ 9 մանկապարտեզ>> ՀՈԱԿ	<<Մարմնամարզական պատ>>	3 հատ
8.	<<ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի թիվ 11 մանկապարտեզ>> ՀՈԱԿ	<<Մարմնամարզական պատ>>	6 հատ

9.	<<ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի թիվ 12 մանկապարտեզ>> ՀՈԱԿ	<<Մարմնամարզական պատ>>	11 հատ
10.	<<ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի թիվ 13 մանկապարտեզ>> ՀՈԱԿ	<<Մարմնամարզական պատ>>	9 հատ
11.	<<ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի թիվ 15 մանկապարտեզ>> ՀՈԱԿ	<<Մարմնամարզական պատ>>	5 հատ
12.	<<ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի թիվ 16 մանկապարտեզ>> ՀՈԱԿ	<<Մարմնամարզական պատ>>	7 հատ
13.	<<Երվանդ Քոչարի անվան մանկական արվեստի դպրոց>> ՀՈԱԿ	<<Մարմնամարզական պատ>>	2 հատ
14.	<<Արտակ Ռաֆայելյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց>> հիմնարկ	<<Մարմնամարզական պատ>>	5 հատ
15.	<<Վահե Զաքարյանի անվան երիտասարդական մարզամշակութային ուսումնական կենտրոն>> հիմնարկ	<<Մարմնամարզական պատ>>	5 հատ
16.	<<Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն>> հիմնարկ	<<Մարմնամարզական պատ>>	2 հատ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Մահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մարտի 2021թվականի N 303

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ
ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի
24-րդ կետին Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ
հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող Կենտրոն
թաղամասի Զորավար Անդրանիկի պողոտա 58/10 հասցեում գտնվող 73.0քմ մակերեսով
հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի բնակելի
կառուցապատման հողերից փոփոխել հասարակական կառուցապատման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

05 մարտի 2021թ.
ք. Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 մարտի 2021թվականի N 304

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Գարսնան Մկրտչյանի 2021 թվականի մարտի 3-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի թիվ 204 տան բնակիչ Գարսնան Մկրտչյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող(սեփականության իրավունքի գրանցման վկայական 2221898, տրված՝ 2006 թվականի հունիսի 30-ին) Հրազդան քաղաքի Վանատուր նոր թաղամասում գտնվող բնակելի տանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Վանատուր Նորակառույց թաղամաս, Պուրակային փողոց, 1-ին նրբանցք 6:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

09 մարտի 2021թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 մարտի 2021թվականի N 305

**ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՄԻ 01-Ի
N 383 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի
1-ին մասի 3-րդ կետով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ


1. Հրազդան համայնքի ղեկավարի 2016 թվականի հուլիսի 01-ի «Համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 383 որոշման N 14 և N 67 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1, 2 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

09 մարտի 2021թ.
ք. Հրազդան





ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅԻՆ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՑԹԻ ԵՎ ՄՊՈՐՏԻ ԲԱԺԻ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

2.2 - 5
(ծածկագիր)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի (այսուհետ՝ աշխատակազմ) Բաժնի պետի տեղակալի (այսուհետ՝ Բաժնի պետի տեղակալ) պաշտոնն ընդգրկվում է համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ ենթախմբում:

2. Բաժնի պետի տեղակալին «Համայնքային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված կարգով պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է աշխատակազմի քարտուղարը (այսուհետ՝ քարտուղար):

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. Բաժնի պետի տեղակալն անմիջականորեն ենթակա և հաշվետու է քարտուղարին /կամ Բաժնի պետին/:

4. Բաժնի պետի տեղակալն իրեն ենթակա աշխատողներ չունի:

5. Բաժնի պետի տեղակալի բացակայության դեպքում նրան փոխարինում է աշխատակազմի այլ գլխավոր մասնագետը կամ աշխատակազմի առաջատար մասնագետներից մեկը՝ քարտուղարի /կամ Բաժնի պետի/ հայեցողությամբ:

Օրենքով նախատեսված դեպքերում Բաժնի պետի տեղակալին փոխարինում է համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող՝ առյուծ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող անձը, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

Բաժնի պետի տեղակալը Բաժնի պետի կամ Բաժնի գլխավոր մասնագետներից մեկի բացակայության դեպքում փոխարինում է նրանց:

6. Բաժնի պետի տեղակալը՝

ա) աշխատանքների կազմակերպման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի:

բ) օժանդակում է աշխատակազմի ավելի ցածր պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողների աշխատանքներին, ինչպես նաև մասնակցում է աշխատակազմի աշխատանքների ծրագրմանը, իսկ քարտուղարի /կամ Բաժնի պետի/ հանձնարարությամբ՝ նաև կազմակերպմանը:

գ) կատարում է քարտուղարի /կամ Բաժնի պետի/ հանձնարարականները:

դ) պատասխանատվություն է կրում իրավական ակտերի պահանջները և իրեն վերապահված լիազորությունները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, լիազորությունները վերազանցելու համար:

3. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Բաժնի պետի տեղակալը մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը և հանձնարարականների կատարմանը:

4. ԾՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

8. Բաժնի պետի տեղակալը՝

ա) աշխատակազմի ներսում իր լիազորությունների շրջանակներում շփվում է աշխատակազմի քարտուղարի կամ բաժնի պետի/ և աշխատակազմի այլ աշխատողների հետ.

բ) առանձին դեպքերում քարտուղարի /կամ բաժնի պետի/ հանձնարարությամբ աշխատակազմից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ:

5. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐՊԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

9. Բաժնի պետի տեղակալն իր լիազորությունների շրջանակներում մասնակցում է խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներին:

6. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Բաժնի պետի տեղակալը՝

ա) ունի բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, մինչև 2018 թվականի հունվարի 1-ը համայնքային ծառայության, պետական և (կամ) համայնքային կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.

բ) ունի Ընտանեկան օրենսգրքի, «Համայնքային ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Սոցիալական աջակցության մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

դ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

7. ԻՐԱՎՈՒՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Բաժնի պետի տեղակալը՝

ա) կատարում է քարտուղարի /կամ բաժնի պետի/ հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.

բ) իր կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի և կյութերի փորձաքննության ուղարկելու անհրաժեշտության մասին առաջարկություններ է ներկայացնում քարտուղարի /կամ բաժնի պետին/.

գ) անհրաժեշտության դեպքում, քարտուղարի /կամ բաժնի պետի/ համաձայնությամբ կամ հանձնարարությամբ, մասնակցում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին.

դ) անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում և քարտուղարի /կամ բաժնի պետին/ է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

ե) իրականացնում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում է քարտուղարին /կամ բաժնի պետին/.

զ) ստորագրում է իր կողմից պատրաստվող փաստաթղթերը.

է) սոցիալական աջակցության պետական ծրագրերի հասցեականության մեծացման նպատակով, իր իրավասության սահմաններում, միջոցներ է ձեռնարկում սոցիալական աջակցության կարիք ունեցող քաղաքացիներին և ընտանիքներին հայտնաբերելու ուղղությամբ ու աջակցում է նրանց ՀՄՏԿ դիմելու հարցում.

ը) առաջարկություններ է ներկայացնում իր իրավասության սահմաններում ձեռնարկված միջոցների արդյունքում համայնքում հայտնաբերված կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց (ընտանիքների) սոցիալական պայմանների բարելավման, այդ թվում՝ համայնքի կողմից սոցիալական ծառայությունների հնարավոր տեսակների տրամադրման ուղղությամբ.

թ) ուսումնասիրում է սոցիալական աջակցություն ստանալու համար դիմած քաղաքացիների (ընտանիքների) սոցիալական և եյութական պայմանները ըստ անհրաժեշտության կատարելով տնային այցելություններ, և արդյունքների մասին զեկուցում է անմիջական ղեկավարին.

ժ) սոցիալական աջակցություն ստանալու համար դիմած քաղաքացուն օգնում է բացահայտել և օգտագործել դժվարություններ հաղթահարելու իր կարողությունը.

ժա) մասնակցում է համայնքում սոցիալական աջակցություն ստացողի անհատական սոցիալական ծրագրի մշակման և իրականացման աշխատանքներին.

ժբ) պահպանում է իր կողմից սպասարկվող քաղաքացիներին (ընտանիքներին) սոցիալական աջակցություն տրամադրելու ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը.

ժգ) ամփոփում և Քարտուղարի /կամ բաժնի պետին/ է ներկայացնում սոցիալական ծառայությունների տրամադրման աջակցող ցանցի մյուս մասնակիցների կողմից համայնքի տարածքում իրականացվող սոցիալական

ծառայությունների տրամադրման ծրագրերի և առկա ռեսուրսների մասին ստացված տեղեկատվությունը, ինչպես նաև աջակցող ցանցի մյուս մասնակիցներին է փոխանցում համայնքի կողմից իրականացվող սոցիալական ծառայությունների տրամադրման ծրագրերի և առկա ռեսուրսների մասին իր անմիջական ղեկավարի հետ ճշտված տեղեկատվությունը:

ժդ) առաջարկություններ է ներկայացնում սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի բարելավման ուղղությամբ:

ժե) մասնակցում է համայնքի սոցիալական կարիքների գնահատման, սոցիալական աջակցության համայնքային ծրագրի մշակման և իրականացման աշխատանքներին:

ժզ) առաջարկություններ է ներկայացնում սոցիալական ծառայությունների տրամադրման աջակցող ցանցի մյուս մասնակիցների հետ սոցիալական համագործակցության համաձայնագիր ընդունելու կամ դրան միանալու վերաբերյալ:

ժէ) կատարում է Քարտուղարի /կամ բաժնի պետի/ հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով:

ժը) անհրաժեշտության դեպքում, Քարտուղարի /կամ բաժնի պետի/ համաձայնությամբ կամ հանձնարարությամբ, մասնակցում է ՀՄՄՏԿ-ի, համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին:

ժթ) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Բաժնի պետի տեղակալն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

8. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՄԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

12. Բաժնի պետի տեղակալին օրենքով սահմանված կարգով շնորհվում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:



ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲԱԺՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ

2.3 - 12
(ծածկագիր)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի Համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի (այսուհետ՝ բաժին) գլխավոր մասնագետի պաշտոնն ընդգրկվում է համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 3-րդ ենթախմբում:

2. Բաժնի գլխավոր մասնագետին «Համայնքային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված կարգով պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը (այսուհետ՝ քարտուղար):

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. Բաժնի գլխավոր մասնագետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է բաժնի պետին:

4. Բաժնի գլխավոր մասնագետն իրեն ենթակա աշխատողներ չունի:

5. Բաժնի գլխավոր մասնագետի բացակայության դեպքում բաժնի գլխավոր կամ առաջատար մասնագետը կատարում է նախատեսված բաժնի գլխավոր մասնագետի աշխատանքները՝ բաժնի պետի հայեցողությամբ:

Օրենքով նախատեսված դեպքերում բաժնի գլխավոր մասնագետին փոխարինում է համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող՝ սույն պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող անձը, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

6. Բաժնի գլխավոր մասնագետը՝

ա) բաժնի աշխատանքների կազմակերպման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի:

բ) օժանդակում է բաժնի ավելի ցածր պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողների աշխատանքներին, ինչպես նաև մասնակցում է բաժնի աշխատանքների ծրագրմանը, իսկ անմիջական ղեկավարի հանձնարարությամբ՝ նաև կազմակերպմանը:

գ) համակարգում է արվեստի և երաժշտական դպրոցների աշխատանքները:

դ) պատասխանատվություն է կրում իրավական ակտերի պահանջները և իրեն վերապահված լիազորությունները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, լիազորությունները վերազանցելու համար:

3. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅՄԱՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Բաժնի գլխավոր մասնագետը մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը և հանձնարարականների կատարմանը:

4. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

8. Բաժնի գլխավոր մասնագետը՝

ա) բաժնի ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում:

բ) աշխատակազմի ներսում իր լիազորությունների շրջանակներում շփվում է աշխատակազմի քարտուղարի, աշխատակազմի այլ աշխատողների հետ, այդ թվում՝ այլ բաժինների աշխատողների և պաշտոնատար անձանց հետ:

գ) առանձին դեպքերում բաժնի պետի հանձնարարությամբ աշխատակազմից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ:

5. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

9. Բաժնի պետի հանձնարարությամբ իր պաշտոնի անձնագրով նախատեսված դեպքում մասնակցում է բարդ խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներին:

6. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Բաժնի գլխավոր մասնագետը՝

ա) ունի բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, մինչև 2018 թվականի հունվարի 1-ը համայնքային ծառայության պետական և (կամ) համայնքային կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ:

բ) ունի «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Հանրային ծառայության մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Լեզվի մասին» օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը:

դ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

7. ԻՐԱՎՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Բաժնի գլխավոր մասնագետը՝

ա) կատարում է բաժնի պետի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով:

բ) իր կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի և նյութերի փորձաքննության ուղարկելու անհրաժեշտության մասին առաջարկություններ է ներկայացնում բաժնի պետին:

գ) անհրաժեշտության դեպքում, բաժնի պետի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ, մասնակցում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին:

դ) անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում և բաժնի պետին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ:

ե) իրականացնում է նախադպրոցական հիմնարկների վերահսկողության լիազորություններ:

զ) իրականացնում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում է բաժնի պետին:

է) ստորագրում է իր կողմից պատրաստվող փաստաթղթերը:

ը) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Բաժնի գլխավոր մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

8. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՄԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

12. Բաժնի գլխավոր մասնագետին օրենքով սահմանված կարգով շնորհվում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 3-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 մարտի 2021թվականի N 306

ՄՆՆԴԻ ՕԲՅԵԿՏԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Համայակ Ավետիսյանի լիազոր անձ Էդգար Իսկանդարյանի 2021 թվականի մարտի 4-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Երևան քաղաքի Նոր Արեշ 8 փողոցի թիվ 26/2 տան բնակիչ Համայակ Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 2455873, տրված՝ 2007 թվականի հոկտեմբերի 5-ին) Հրազդան քաղաքի Ջրատատ թաղամասում գտնվող սննդի օբյեկտին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Ջրատատ թաղամաս, Գործարանային փողոց 47:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

09 մարտի 2021թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 մարտի 2021թվականի N 307

**ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԲԱԺԱՆՎՈՂ ՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ, 7-րդ բաժինների պահանջների, հիմք ընդունելով ԱԶ Աշոտ Հակոբյանի կողմից տրամադրված հատակագծերը և Վարուժան Հունանյանի 2021 թվականի մարտի 3-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի թիվ 157 տան բնակիչ Վարուժան Հունանյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N16122019-07-0027, գաղտնաբառ՝ Y1URQMJ2MCKZ/ Հրազդան քաղաքի Վանատուր թաղամաս 157 հասցեում գտնվող բնակելի տան 545.22քմ մակերեսով բաժանվող մասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս 157/1, իսկ 681.49քմ մակերեսով մասինը թողնել նույնը՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս 157:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

09 մարտի 2021թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Մահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 մարտի 2021թվականի N 308

**ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԲԱԺԱՆՎՈՂ ՄԱՍԻՆ
ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ, 7-րդ բաժինների պահանջների, հիմք ընդունելով ԱԶ Աշոտ Հակոբյանի կողմից տրամադրված հատակագծերը և Վարուժան Հունանյանի 2021 թվականի մարտի 3-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի թիվ 157 տան բնակիչ Վարուժան Հունանյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N16122019-07-0045, գաղտնաբառ՝ QAYCZD6NF3JL/ Հրազդան քաղաքի Վանատուր թաղամաս 115/2 հասցեում գտնվող բնակելի տան 405.0քմ մակերեսով բաժանվող մասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս 115/3, իսկ 405.0քմ մակերեսով մասինը թողնել նույնը՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս 115/2:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

09 մարտի 2021թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Մահմանադրության հրապարակ 1
 (0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 մարտի 2021թվականի N 309

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՅԵՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՄԻԱՎՈՐՎԱԾ
ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ, 7-րդ, 8-րդ բաժինների պահանջների, հիմք ընդունելով Նոննա Աբրահամյանի 2021 թվականի մարտի 5-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Երևան քաղաքի Վ. Վաղարշյան փողոցի 24/1 շենքի թիվ 20 բնակարանի բնակչուհի Նոննա Աբրահամյանին կառուցապատման իրավունքով տրամադրված /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 07022014-07-0002, տրված՝ 2014 թվականի փետրվարի 7-ին / Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 41 շենքին հարող տարածք 12 հասցեում գտնվող հողամասի հասցեն փոփոխել՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 41/12 հասցեով:
2. Երևան քաղաքի Վ. Վաղարշյան փողոցի 24/1 շենքի թիվ 20 բնակարանի բնակչուհի Նոննա Աբրահամյանին կառուցապատման իրավունքով տրամադրված Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 41/12 և /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 04072019-07-0082, գաղտնաբառ՝ CWAFLUSKIW9L/ Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 41/2 հասցեներում գտնվող միավորված հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 41/2, 41/12:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

09 մարտի 2021թ.
 ք. Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Մահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 մարտի 2021թվականի N 310

**ՍԱՄՎԵԼ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՅԱՊԱՏՄԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2 կետի «ա» ենթակետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2021 թվականի փետրվարի 25-ի N 39 որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետը և Մամվել Սարգսյանի 2021 թվականի մարտի 2-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Շահումյան փողոցի թիվ 115ա տան բնակիչ Մամվել Սարգսյանին կառուցապատման իրավունքով տրամադրել Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամաս 4/4 հասցեում գտնվող 19.95քմ մակերեսով հողամասը՝ ավտոտնակ կառուցելու նպատակով, 12000 (տասներկու հազար) դրամ տարեկան վարձավճարով, 99 (իննսունինը) տարի ժամկետով:
2. Հողամասն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում:
3. Մամվել Սարգսյանի հետ կնքել հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագիր:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

09 մարտի 2021թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 մարտի 2021 թվականի N 311

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՄԱՅՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՐ
ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, 2019 թվականի նոյեմբերի 19-ի <<Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի 2020 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 40 մասնագիտական եզրակացությունը և հաշվի առնելով կառույցն ու հողամասը կառույցն իրականացրած անձին գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարելու վերաբերյալ 2021 թվականի մարտի 1-ի N 303 գրավոր առաջարկությունը և Սամվել Դանիելյանի կողմից տրված 2021 թվականի մարտի 3-ի թիվ 261 գրավոր համաձայնագիրը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող Միկրոշրջան թաղամաս 13-րդ փողոց 24/8 հասցեում գտնվող՝ 105.08քմ մակերեսով տնտեսական շինությունը ճանաչել օրինական:
2. Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 13-րդ փողոց 24/8 հասցեում գտնվող Հրազդան համայնքի սեփականությունը հանդիսացող, սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված 105.08քմ մակերեսով տնտեսական շինությունը գինը սահմանել 358000 /երեք հարյուր հիսունութ հազար/ դրամ /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 25022021-07-0099, գաղտնաբառ՝ SNITAIJ2QD6S/և նույն հասցեում գտնվող տնտեսական շինության համար առանձնացված 130.2քմ մակերեսով հողամասը 250000 /երկու հարյուր հիսուն հազար/

դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել կառույցն իրականացրած անձ՝ Կոտայքի մարզի Աղավնաձոր գյուղի 4 փողոցի 3 փակուղի թիվ 2 տան բնակիչ Սամվել Դանիելյանին (այսուհետ գնորդ):

3. Գնորդը պարտավոր է գնման առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում որոշման 2-րդ կետով տնտեսական շինության համար սահմանված գումարը վճարել Հրազդան համայնքի բյուջեի թիվ 900125001504, իսկ հողամասի համար սահմանված գումարը թիվ 900125001140 գանձապետական հաշիվներին:

4. Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5. Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

09 մարտի 2021թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 մարտի 2021 թվականի N 312

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՈՒՅՔԸ
ՎԱՐՁԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2021 թվականի փետրվարի 25-ի N 46 որոշումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 09082013-07-0044), Հրազդան համայնքի Կենտրոն թաղամասի 58 հասցեում գտնվող սպորտ դպրոցի շենքից 450 քառակուսի մետր մակերեսով տարածքը 3 (երեք) տարի ժամկետով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրել էղուարդ Արսյունի Գևորգյանին՝ ամեն օր, ժամը 18:00-ից մինչև 22:00-ը ֆուտբոլային դասընթացներ անցկացնելու համար:
2. Վարձավճարի չափը հունվար, փետրվար, մարտ և դեկտեմբեր ամիսներին սահմանել 50.000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ապրիլից նոյեմբեր ամիսներին սահմանել 30.000 (երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

09 մարտի 2021 թ.
ք. Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 մարտի 2021թվականի N 313

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի N 176-Ն որոշմամբ հաստատված հավելվածը, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 28-ի N 104-Ն որոշման հավելվածը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի «Հրազդան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 176-Ն որոշմամբ հաստատված հավելվածի «Այլ նպաստներ բյուջեից» 4729 հոդվածով նախատեսված ծախսերից 50000 / հիսուն հազար/ դրամ գումար հատկացնել Արցախի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների ընթացքում վիրավորում ստացած բնակիչին՝ համաձայն հավելվածի :
2. Հանձնարարել ֆինանսական բաժնին կատարելու նշված վճարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

09 մարտի 2021թ.
ք.Հրազդան





Հավելված
Հրապարակման համայնքի ղեկավարի
2021թվականի մարտի 9-ի
N 313 որոշման

ՀԱՎԵԼՎԱԾԸ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԷ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱԴԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 մարտի 2021թվականի N 314

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի N 176-Ն որոշմամբ հաստատված հավելվածը, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 28-ի N 104-Ն որոշման հավելվածը, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2021 թվականի փետրվարի 25-ի N 29 որոշումը, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի հոկտեմբերի 19-ի N130 որոշումը, բնակիչների դիմումները

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի «Հրազդան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 176-Ն որոշմամբ հաստատված հավելվածի «Այլ նպաստներ բյուջեից» 4729 հոդվածով նախատեսված ծախսերից 450000 /չորս հարյուր հիսուն հազար/ դրամ գումար հատկացնել Հրազդան համայնքի սոցիալապես անապահով թվով 32 բնակիչներին՝ համաձայն հավելված 1, 2, 3-ի:
2. Հանձնարարել ֆինանսական բաժնին կատարելու նշված վճարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԳԱՎԱՐ՝



Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

09 մարտի 2021թ.
ք. Հրազդան



Հավելված 1

Հրազդան համայնքի ղեկավարի
2021թվականի մարտի 9-ի
N 314 որոշման

ՅՈՒՅԱԿ

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՅՈՂՆԵՐԻ

Հ/Հ	Ազգանուն, անուն	Հասցե	Գումար դրամ
1	Քոչարյան Իրինա	ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. 23/20	10000
2	Աթապյան Գագիկ	ք. Հրազդան, Կենտրոն թաղ. 44/20	10000
3	Պետրոսյան Հակոբ	ք. Հրազդան, Կենտրոն թաղ. 76/50	10000
4	Աբրահամյան Լյուդմիլա	ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. 25/15	5000
5	Նիկոլյան Վաչագան	ք. Հրազդան, Վանատուր թաղ. 269	10000
6	Բետանո Անաիդա	ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. 24/1	10000
7	Հարությունյան Գյուլնարա	ք. Հրազդան, Կենտրոն թաղ. 83/503	10000
8	Սարգսյան Վանիկ	ք. Հրազդան, Երկաթ գծի կայ. 1/16	10000
9	Դավթյան Արմիկ	ք. Հրազդան, Կենտրոն թաղ. 43/49	10000
10	Մանուկյան Ամալյա	ք. Հրազդան, Կենտրոն թաղ. 40/1	10000
11	Գրիգորյան Ադվան	ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. 71/72	10000
12	Կիրակոսյան Միրանուշ	ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. 252/37	15000
13	Բազրատյան Էդվարդ	ք. Հրազդան, Կենտրոն թաղ. 37/57	10000
14	Առաքելյան Լենա	ք. Հրազդան, Կենտրոն թաղ. 71/25	10000
15	Հակոբյան Ռուզաննա	ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. 95/14	15000
16	Հակոբյան Նազելի	ք. Հրազդան, Կենտրոն թաղ. 94/421	10000
17	Ներսիսյան Ծաղիկ	ք. Հրազդան, Միկրոշրջ. թաղ. տնակ 30ա	10000
18	Քրդյան Վերոնիկա	ք. Հրազդան, Կենտրոն թաղ. 26/9	15000
19	Գալստյան Քրիստինե	ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. 57/31	10000
20	Կարապետյան Սեդա	ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. 13/9	10000
21	Ավետիսյան Վահան	ք. Հրազդան, Շահումյան փ. տուն 61	15000
22	Տեր-Հովսեփյան Հովսեփ	ք. Հրազդան, Կենտրոն թաղ. 16/33	10000
23	Կալստանյան Ռուբեն	ք. Հրազդան, Կենտրոն թաղ. 80/24	20000
24	Սարգսյան Գեորգի	ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. 91/6	10000
	Ընդամենը		265000



Հավելված2
Հրազդան համայնքի ղեկավարի
2021թվականի մարտի 9-ի
N 314 որոշման

**2020 թվականի հոկտեմբերի 19-ի ավագանու N 130 որոշման համաձայն
ֆինանսական օգնություն ստացողների ցուցակ**

Հ/Հ	Ազգանուն, անուն	Հասցե	Գումար դրամ
1.	Մահակյան Հասմիկ	ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. 2/10	15000
2.	Չիտչյան Անահիտ	ք. Հրազդան, Ջրառատ թաղ. տուն 550/1	15000
3.	Հովսեփյան Անի	ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ.221/30	15000
	Ընդամենը		45000



Հավելված3

Հրազդան համայնքի ղեկավարի

2021թվականի մարտի 9-ի

N 314 որոշման

**2021 թվականի փետրվարի 25-ի ավագանու N 29 որոշման համաձայն
ֆինանսական օգնություն ստացողների ցուցակ**

Հ/Հ	Ազգանուն, անուն	Հասցե	Գումար դրամ
1.	Ղազարյան Գոհար	ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. 60/4	20000
2.	Սարգսյան Ռոզա	ք. Հրազդան, Ջրառատ թաղ. տուն 377	20000
3.	Հայրապետյան Արմեն	ք. Հրազդան, Շահումյան փ. տուն 188	20000
4.	Հակոբյան Սամվել	ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. 42/36	40000
5.	Համբարձումյան Գնել	ք. Հրազդան Միկրոշրջան թաղ. 27/36	40000
	Ընդամենը		140000



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մարտի 2021թվականի N 315

**ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱՌԵՎՏՐԻ, ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ
ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՇԵՆՔԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ և 7-րդ բաժինների պահանջների, հիմք ընդունելով Աշոտ Խաչատրյանի 2021 թվականի մարտի 10-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Նար-դոսի փողոց 5/1 տան բնակիչ Աշոտ Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ՝ N 28092020-07-0159, գաղտնաբառ՝ DCSQCC4PBFA1 և N 10032021-07-0005, գաղտնաբառ՝ CPWKEYVVKSNR/ Հրազդան քաղաքի Վանատուր թաղամաս Հայ Ֆիդայիների փողոց 15/2 և 15/3 հասցեներում գտնվող միավորված առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս, Հայ Ֆիդայիների փողոց 15/2, 15/3:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

10 մարտի 2021թ.
ք.Հրազդան

